ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 02.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/05

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի 16.01.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/05 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Ֆոտոն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 16.01.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքով հայտնել է, որ «Երևանի թիվ 17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «17ՀԴ-ԳՀԱՊՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Նորք-7» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին: «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման գումարը գերազանցում է հրավերով պահանջվող գնային առաջարկի 5 տոկոսը:

Ընկերության կողմից որպես բողոքի իրավական հիմքեր և հիմնավորումներ նշվել է հետևյալը՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն (այսուհետ նաև՝ Կարգ)՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է մերժեր «Նորք-7» ՍՊԸ-ի հայտը, քանի որ ներկայացված հայտի ապահովումը կազմված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին.

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Ընկերությունը ներկայացված բողոքով Խորհրդին խնդրել է մերժել «Երևանի թիվ 17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սենդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «17ՀԴ-ԳՀԱՊՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Նորք-7» ՍՊԸ-ի հայտը:

«Ֆոտոն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.01.2018թ. ժամը 11:10-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

2. «Նորք-7» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Նորք-7» ՍՊԸ-ն Խորհրդին ուղղված միջնորդությամբ Խորհրդի 23.01.2018թ. միջանկյալ որոշմամբ ԳԲԽ-ԱՄ-2018/05 բողոքով ներգրավվել է որպես երրորդ կողմ:

«Նորք-7» ՍՊԸ-ն 01.02.2018թ. ներկայացված առարկությունով հայտնել է հետևյալը.

«Երևանի թիվ 17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «17ՀԴ-ԳՀԱՊՁԲ-18/01» ծածկագրով գնման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ ընկերությունների հայտ է ներկայացրել նաև «Նորք-7» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից թիվ 5 հավելվածով՝ գնային առաջարկով ներկայացված ընդհանուր գինը կազմել է 8,157,696 ՀՀ դրամ:

Ընկերությունը որպես հայտի ապահովում ներկայացրել է տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը, որի գումարը կազմել է 407,885 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Նորք-7» ՍՊԸ-ն 13-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

www.gnumner.am կայքում 11.01.2018թ. հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որի վերջնաժամկետ է սահմանվել 16.01.2018թ.: Նույն հայտարարության համաձայն՝ «Նորք-7» ՍՊԸ-ն 13-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է հաղթող մասնակից:

«Ֆոտոն» ՍՊԸ-ն 16.01.2018թ. բողոք է ներկայացրել Գնումների բողոքարկման խորհրդին:

www.gnumner.am կայքում 22.01.2018թ. հրապարակվել է կնքված պայմանագրի մասին հայտարարություն: Նույն հայտարարության համաձայն՝ «Նորք-7» ՍՊԸ-ի հետ 17.01.2018թ. 13-րդ չափաբաժնի մասով կնքվել է պայմանագիր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ

բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով, «Նորք-7» ՍՊԸ-ի ներկայացված ընդհանուր գինը կազմել է 8,157,696 ՀՀ դրամ, ինչի 5 տոկոսը պետք է լինի 407,884,8 ՀՀ դրամ (8,157,696 * 5= 407,884,8): Սակայն ընկերությունը որպես հայտի ապահովում գումար վճարման պահանջագրում նշել է 407,885 ՀՀ դրամ:

Ըստ «Ֆոտոն» ՍՊԸ-ի «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման գումարը գերազանցում է գնային առաջարկի 5 տոկոսին:

Այս կապակցությամբ ցանկանում ենք հայտնել, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե տասնորդական գումարը 5 նիշից բարձր է /տվյալ դեպքում 8 տասնորդական/, ապա կլորացումը պետք է տեղի ունենա դեպի վերև, ինչը և կատարվել է Ընկերության կողմից: Բացի այդ, 8 լման հաշվարկային միավոր չէ, քանի որ Հայաստանի Հանրապետությունում բավականին վաղուց չի գործարկվում լման, և այդ իսկ պատճառով լման չի կարող հաշվվել որպես դրամ, և այդ դեպքում «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման գումարը ավել չի կարող լինել հայտով ներկայացված գնային առաջարկի 5 տոկոսից: Մենք համաձայն կլինեին բողոքաբերի հետ, եթե Ընկերության կողմից ներկայացված գումարը 1 դրամ ավել լիներ, բայց այս պարագայում խոսքը գնում է ոչ թե ՀՀ-ում գործարկվող արժույթի՝ ՀՀ դրամի մասին, այլ վաղուց գործածությունից դուրս եկած լումայի մասին:

Բացի այդ, Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Այս պարագայում, քանի որ Պատվիրատուն հրապարակել է կնքված պայմանագրի մասին որոշումը, և ըստ այդ որոշման 17.01.2018թ. կնքել է պայմանագիր, այս պարագայում պայմանագիրն առոչինչ է: Սակայն Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն, խորհուրդը որոշում կայացնելիս պետք է առաջնորդվի միայն օրենքի վերոնշյալ հոդվածով, իսկ այս պարագայում կնքված պայմանագիրը առոչինչ ճանաչելու որևէ լիազորություն Խորհուրդը չունի: Իսկ այս պարագայում, գտնում ենք, որ բողոքը առարկայազուրկ է, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ բողոքաբերը իր կողմից ներկայացված բողոքով պահանջել է միայն մերժել «Նորք-7» ՍՊԸ-ի հայտը, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ Խորհուրդը չունի հայտը մերժելու իրավասություն և լիազորություն»:

Ամփոփելով վերոգրյալը, «Նորք-7» ՍՊԸ-ն Գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է մերժել «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 16.01.2018թ. ներկայացված բողոքը:

3. «Երևանի թիվ 17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Երևանի թիվ 17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ը 18.01.2018թ. Խորհրդին է ներկայացրել «17ՀԴ-ԳՀԱՊՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 16.01.2018թ. ներկայացված բողոքի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել Խորհրդին:

«Երևանի թիվ 17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.01.2018թ. ժամը 11:10-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ԳԲԽ-ԱՄ-2018/05 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/05 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի թիվ 17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «17ՀԴ-ԳՀԱՊՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Նորք-7» ՍՊԸ-ն:

2. «Նորք-7» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 8 157 696 ՀՀ դրամ:

3. «Նորք-7» ՍՊԸ-ն հայտի թիվ 10 հավելվածին՝ տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացրել է մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը, որտեղ հայտի ապահովման գումարի չափը նշել է 407 885 ՀՀ դրամ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.12.2017թ. ժամը 09:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Նորք-7» ՍՊԸ-ն թիվ 13-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի 16.01.2018թ. բողոքը, «Երևանի թիվ 17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի 18.01.2018թ. գրությամբ ուղարկված փաստաթղթերը և «Նորք-7» ՍՊԸ-ի 01.02.2018թ. առարկությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:*** Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:*** Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են

անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Երևանի թիվ 17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «17ՀԴ–ԳՀԱՊՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:*** Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 8-րդ կետի 8.2 ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

«Նորք-7» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է ***8 157 696 ՀՀ դրամ***:

«Նորք-7» ՍՊԸ-ն հայտի թիվ 10 հավելվածին՝ տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացրել է մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը, որտեղ հայտի ապահովման գումարի չափը նշել է 407 885 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.12.2017թ. ժամը 09:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Նորք-7» ՍՊԸ-ն թիվ 13-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:***

Այսպիսով, վերոգրյալ իրավական հիմնավորումներից ելնելով, Խորհուրդն արձանագրում է, որ «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման չափը գերազանցում է վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսը, քանի որ «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսը կազմում է ***407 884,8 ՀՀ դրամ***, այլ ոչ ***407 885 ՀՀ դրամ***, ուստի նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից «17ՀԴ-ԳՀԱՊՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ չի բավարարում գնային առաջարկի հինգ տոկոսի չափով ներկայացված լինելու պահանջին:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ «Նորք-7» ՍՊԸ-ի հայտը Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 8-րդ կետի 8.2 ենթակետի համաձայն՝ ենթակա էր մերժման հայտերի բացման նիստում:

Ինչ վերաբերում է «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից 01.02.2018թ. առարկությամբ ներկայացված դիտարկմանը, այն է՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե տասնորդական գումարը 5 նիշից բարձր է /տվյալ դեպքում 8 տասնորդական/, ապա կլորացումը պետք է տեղի ունենա դեպի վերև, ինչը և կատարվել է Ընկերության կողմից: Բացի այդ, 8 լման հաշվարկային միավոր չէ, քանի որ Հայաստանի Հանրապետությունում բավականին վաղուց չի գործարկվում լման, և այդ իսկ

պատճառով լուման չի կարող հաշվվել որպես դրամ, ապա Խորհուրդն արձանագրում է հետևյալը.

<< Կենտրոնական բանկի կողմից 23.02.1994թ. ընդունված «Հայաստանի Հանրապետության տարածքում հաշվառումը և հաշվարկները դրամով իրականացնելու մասին» որոշման 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում պաշտոնական դրամական միավորին՝ դրամին անցնելու կապակցությամբ 1994 թվականի մարտի 1-ից բոլոր տեսակի հաշվարկներն ու հաշվառումը իրականացնել դրամով: Մեկ դրամը բաղկացած է հարյուր (100) լումայից:

Նույն որոշման 3-րդ կետի համաձայն՝ հաշիվների մնացորդները, արժեքները, ապրանքների և ծառայությունների գները ռուբլուց դրամի փոխարժեքի վերահաշվարկելու ժամանակ միավոր մնացորդը կլորացվում է 10 լումայի ճշտությամբ: 10 լումայից ցածր մնացորդը՝ մինչև 5 լումա, չի հաշվվում, իսկ դրանից բարձրը՝ հաշվվում է 10 լումա:

Այսպիսով վերոգրյալով պայմանավորված, Խորհուրդը գտնում է, որ «Նորք-7» ՍՊԸ-ի դիտարկումն անհիմն է, քանի որ լուման Հայաստանի Հանրապետությունում հանդիսանում է հաշվարկային միավոր և տվյալ պարագայում 8 լուման կլորանում է 10 լումայի ճշտությամբ:

Ինչ վերաբերում է «Նորք-7» ՍՊԸ-ի կողմից 01.02.2018թ. առարկությամբ ներկայացված երկրորդ դիտարկմանը, այն է՝ Պատվիրատուն հրապարակել է կնքված պայմանագրի մասին որոշումը, և ըստ այդ որոշման 17.01.2018թ. 13-րդ չափաբաժնի մասով կնքել է պայմանագիր «Նորք-7» ՍՊԸ-ի հետ, սակայն այս պարագայում պայմանագիրն առոչինչ է: Սակայն Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն, խորհուրդը կնքված պայմանագիրը առոչինչ ճանաչելու որևէ լիազորություն չունի, ապա սույն մասով Խորհուրդն արձանագրում է հետևյալը.

<< քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործարքն անվավեր է սույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ ***անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):***

Օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ***անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների***, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: ***Նման գործարքն անվավեր է կնքելու պահից:***

Նույն օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

Վերոգրյալ իրավական հիմնավորումներից ելնելով, Խորհուրդը գտնում է, որ «Նորք-7» ՍՊԸ-ի դիտարկումն սույն մասով ևս անհիմն է, քանի որ անվավեր գործարքը անվավեր է կնքելու պահից և չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, ուստի Խորհուրդը իր որոշումը կայացնելիս կաշկանդված չէ նման գործարքի կնքված կամ չկնքված լինելու փաստով:

Ինչ վերաբերում է այն դիտարկմանը, որ Խորհուրդը չունի հայտը մերժելու իրավասություն և լիազորություն, ապա սույն մասով Խորհուրդն արձանագրում է հետևյալը.

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ***ընդունել որոշումներ***,

բ. ***պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ***, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Ելնելով վերոգրյալից, Խորհուրդը գտնում է, որ «Նորք-7» ՍՊԸ-ի դիտարկումն սույն մասով ևս անհիմն է, քանի որ Խորհուրդը Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետով սահմանված իր լիազորությունների շրջանակներում կարող է ընդունել որոշումներ և պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունելու այդ որոշումները՝ ներառյալ հայտը մերժելու մասին որոշումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» << օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ << գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

«Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 16.01.2018թ. ներկայացված բողոքը բավարարել՝

Պարտավորեցնել «Երևանի թիվ 17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «17ՀԴ-ԳՀԱՊՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին մերժելու «Նորք-7» ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ